ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 15.08.2019թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/123

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «Խաչմիշշին» ՍՊԸ-ի տնօրեն՝

Մ. Համզյանի (իրավաբանական անձի պետական գրանցման վկայական N 03Ա068136)

Իջևանի համայնքապետարանի ներկայացուցիչներ՝

Ս. Սիրադեղյանի (լիազորագիր, տրված 24.07.2019թ.)

Ա. Այդինյանի (լիազորագիր, տրված 24.07.2019թ.)

Ա. Նազինյանի (լիազորագիր, տրված 24.07.2019թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 17.07.2019թ. թիվ 26/26-1/11976-2019 գրությամբ «Խաչմիշշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Իջևանի համայնքապետարանի 10.07.2019թ. թիվ 551 գրության հիման վրա, 17.07.2019թ. թիվ 26/26-1/11976-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Խաչմիշշին» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Խաչմիշշին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Խաչմիշշին» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 22.07.2019թ. թիվ 19/53 գրությամբ հայտնել է, որ «Խաչմիշշին» ՍՊԸ-ն Իջևանի համայնքապետարանի կողմից հայտարարված «ՀՀ Տավուշի մարզի Իջևան համայնքի Գանինի փողոցի զբոսայգու վերակառուցման» աշխատանքների (Գնանշման հարցման ծածկագիրը՝ ՀՀ ՏՄԻՔ-ԳՀԱՇՁԲ-19/01) մրցույթում հաղթող է ճանաչվել: Մրցույթի կարգին համաձայն 02.05.2019թ. կնքվել է պայմանագիր «Խաչմիշշին» ՍՊԸ-ի և Իջևանի համայնքապետարանի միջև: «Խաչմիշշին» ՍՊԸ-ն համայնքապետարանի կողմից ստացած 02 մայիսի 2019թ N5 շինթույլտվության և «ՀՀ ՏՄԻՔ-ԳՀԱՇՁԲ-19/01» պայմանագրի համաձայն 02.05.2019թ. սկսել է շինարարական աշխատանքները:

«Խաչմիշշին» ՍՊԸ-ն գրություն է ստացել քաղաքացի Վ. Ն. Մելիքբեկյանից այն մասին, որ շինարարության համար նախատեսված տարածքի սեփականատեր է հանդիսանում ինքը՝ Վ.Մելիքբեկյանը, և որ հորդորում է «Խաչմիշշին» ՍՊԸ-ին զերծ մնալ անօրինական քայլերից:

Ինչին «Խաչմիշշին» ՍՊԸ-ն պատասխանել է, որ այդ հարցով Վ.Մելիքբեկյանը դիմի մրցույթի Պատվիրատուին՝ Իջևանի համայնքապետարանին:

Վերոհիշյալ շինարարական աշխատանքներն իրականացնելու ընթացքում շինհրապարակում «Խաչմիշշին» ՍՊԸ-ի տնօրեն Մ. Համզյանին են մոտեցել ոստիկանության աշխատակիցները, պահանջելով դադարեցնել աշխատանքները: Հաշվի առնելով իրավապահ մարմինների պահանջը, «Խաչմիշշին» ՍՊԸ-ն դիմել է պայմանագրի

պատվիրատու Իջևանի համայնքապետարանին առաջացած խնդրին լուծում տալու խնդրանքով:

«Խաչմիշշին» ՍՊԸ-ի խնդրանքին ի պատասխան, համայնքապետարանը հայտնել է, որ դիմել է իրավապահ մարմիններին շինաշխատանքների բնականոն ընթացքն ապահովելու համար և խնդրել է վերսկսել աշխատանքները «ՀՀ ՏՄԻՔ-ԳՀԱՇՁԲ-19/01» պայմանագրի համաձայն, հակառակ դեպքում ՀՀ օրենսդրությամբ «Խաչմիշշին» ՍՊԸ-ին կենթարկի պատասխանատվության, պայմանագրի կապալառուի պարտականությունները չիրականացնելու հիման վրա:

«Խաչմիշշին» ՍՊԸ-ն կրկին անգամ դիմել է պայմանագրի պատվիրատու Իջևանի համայնքապետարանին, նկարագրելով ստեղծված իրավիճակը և կրկին խնդրելով առանց խոչընդոտների շինհրապարակ տրամադրելու մասին:

Այնուհետև «Խաչմիշշին» ՍՊԸ-ն 14.05.2019թ. ՀՀ Ոստիկանության Տավուշի մարզային վարչության Իջևանի բաժնի գրությամբ տեղեկացվել է, որ է ոստիկանության Իջևանի բաժնում՝ իրականացվող շինարարության վերաբերյալ նախապարաստվում են նյութեր:

Ոստիկանության գրությունն ի նկատի ունենալով, «Խաչմիշշին» ՍՊԸ-ն դիմել է ոստիկանության պետ Ոստիկանության փոխգնդապետին գրությամբ՝ ներկայացնելով իրավիճակը և խնդրելով առաջացած խնդրին տալ վերջնական հանգուցալուծում:

Ոստիկանության գրությանը հաջորդել է Հայաստանի Հանրապետության Քննչական կոմիտեի Տավուշի մարզային վարչությունից 24 մայիսի 2019թ-ի N 55/577/1178-19 աշխատանքների դադարեցման վերաբերյալ գրություն, որտեղ նշվում է անհապաղ դադարեցնել Գանինի փողոցի զբոսայգու վերակառուցման շինաշխատանքները, մինչև քրեական գործով դրանց օրինաչափության հարցի լուծումը:

«Խաչմիշշին» ՍՊԸ-ն աշխատանքները դադարեցնելու Քննչական կոմիտեի գրության մասին իրազեկել է պատվիրատուին՝ առաջարկելով կասեցնել «ՀՀ ՏՄԻՔ-ԳՀԱՇՁԲ-19/01» պայմանագիրը, որին ի պատասխան պատվիրատուն կրկին անգամ պահանջել է շարունակել աշխատանքները սպառնալով ենթարկել «Խաչմիշշին» ՍՊԸ-ին պատասխանատվության, պայամանագրով նախատեսված պարտականությունները չիրականցնելու պատճառով:

Շինաշխատանքները վերսկսվել են, որին հաջորդել է բողոք-ակցիա հողամասի սեփականատիրոջ կողմից, սեփականատիրոջ հարազատները ամեն կերպ խոչընդոտել են

աշխատանքների իրականացմանը՝ հարազատները շրջան են կազմում և կանգնում շինհրապարակում:

«Խաչմիշշին» ՍՊԸ-ն նշված անկարգությունների մասին մի շարք գրություններով իրազեկել է և՛ Ոստիկանությանը և՛ Պատվիրատուին, առաջարկելով վերջինիս կա՛մ անորոշ ժամանակով դադարեցնել պայմանագիրը, կա՛մ լուծել այն:

20 հունիսին Պատվիրատուն արձագանքել է «Խաչմիշշին» ՍՊԸ-ի գրություններին տեղեկացնելով, որ տարածքը Վ.Մելիքբեկյանի սեփականությունը չի կարող հանդիսանալ համաձայն «Գեոդեզիա և քարտեզագրություն» ՊՈԱԿ-ի կողմից տրված եզրակացության և խնդրում է շարունակել շինաշխատանքները:

«Խաչմիշշին» ՍՊԸ-ն հիմք ընդունելով վերոհիշյալ եզրակացությունը և Պատվիրատուի գրությունը վերսկսել է շինաշխատանքները և կրկին անգամ աշխատանքները ստիպված դադարեցրել հանդիպելով սեփականատիրոջ հարազատների կողմից առաջացրած անկարգություններին:

Հաշվի առնելով պայմանագրով սահմանված ժամկետի սղությունը, այս անգամ արդեն «Խաչմիշշին» ՍՊԸ-ն Պատվիրատուից պահանջել է իրականացնել պատվիրատուի պարտականությունները կամ լուծել պայմանգիր փոխադարձ համաձայնությամբ առանց կողմերը մեկը մյուսի նկատմամբ պարտավորությունների:

Չստանալով վերոհիշյալ գրություններին պատասխան, 01.07.2019թ. «Խաչմիշշին» ՍՊԸ դիմել է Պատվիրատուին՝ խնդրանքով անորոշ ժամկետով երկարաձգել պայմանգրի վերջնաժամկետը, որպեսզի կազմակերպությունը Գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից չզրկվի: Նմանատիպ գրություն ուղարկվել է նաև Քննչական վարչություն խնդրելով վերջինիս միջամտությունը

02.07.2019թ Քննչական վարչությունից ստացված գրությամբ կրկին նշվում է, որ 02.05.2019թ. տրված շինթույլտվության հիման վրա իրականացվող շինաշխատանքները պետք է անհապաղ դադարեցնել, մինչև թիվ 38157719 քրեական գործի ավարտը:

28.06.2019թ դրությամբ ավարտվել է «ՀՀ ՏՄԻՔ-ԳՀԱՇՁԲ-19/01» պայմանագրով նախատեսված շինաշխատաների կատարման ժամկետը և պայմանագրի պատվիրատու Իջևանի համայնքապետարանը քաջատեղյակ լինելով իրավիճակին և անտեսելով Կապալառու՝ «Խաչմիշշին» ՍՊԸ-ի պայմանագրի ժամկետի երկարաձգման կամ պայմանագրի լուծման խնդրանքները, ինչպես նաև անտեսելով քննչական կոմիտեից

ստացված 24.05.2019թ. N55/577/1178-19 գրությունը, որտեղ Իջևանի բաժնի պետ ոստիկանության փոխգնդապետ Գ.Միրզոյանին հանձնարարում է ապահովել Գանինի փողոցի շինաշխատանքների դադարեցումը, 04.07.2019թ.-ին gnumner.am կայքում տեղադրել է պայմանգիրը միակողմանի լուծելու և Կապալառու «Խաչմիշշին» ՍՊԸ-ին, ֆինանսական տույժ ու տուգանքի ենթարկելու մասին ծանուցումը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի աշխատակազմի կողմից ուղարկված 19 հուլիսի 2019թ.-ի ՍՑ-ՆԳ-2019/123 վերնագրով էլեկտրոնային գրությանը կից գրություններից «Խաչմիշշին» ՍՊԸ-ն միայն ծանոթացավ Պատվիրատու Իջևանի համայնքապետարանի ՀՀ ՖՆ նախարարին ուղված 10 հուլիս 2019թ.-ի N551 գրությանը, որտեղ համայնքապետարանը պայմանագիրը լուծելու արգումենտներից մեկն է համարում այն, որ «Խաչմիշշին» ՍՊԸ-ն հրաժարվել է Պայմանագրի ժամկետը երկարաձգել, մինչդեռ

1.«Խաչմիշշին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գրությունները փաստում են, որ հաշվի առնելով ստեղծված իրավիճակը «Խաչմիշշին» ՍՊԸ-ն առաջինն ինքն է բազմիցս իր գրություններում առաջարկել երկարաձգել պայմանագրի ժամկետը:

2. «Խաչմիշշին» ՍՊԸ-ն մինչ օրս Պատվիրատուից ժամկետը երկարացնելու մասին գրություն չի ստացել:

Այնուամենայնիվ «Խաչմիշշին» ՍՊԸ-ն հասցրել է իրականացնել որոշակի աշխատանքներ, որին համապատասխան 18.06.2019թ. Պատվիրատու Իջևանի համայնքապետարանին ներկայացվել է կատարողական ակտ: Ակտը ներկայացնելուց հետո Պատվիրատուի կարգադրությամբ կազմվել է հանձնաժողով կատարված աշխատանքները ստուգելու նպատակով: Եվ որպես ստուգման արդյունք Պատվիրատուին է ներկայացվել 1.715.899 (մեկ միլիոն յոթ հարյուր տասնհինգ հազար ութ հարյուր իննսունինը) ՀՀ դրամին համարժեք կատարողական ակտ: 18.06.2019թ. մինչ օրս Պատվիրատու Իջևանի համայնքապետարանը կատարողականով ներկայացված գումարը չի վճարել:

Ընկերությունը խնդրել է ուսումնասիրել «Խաչմիշշին» ՍՊԸ-ի կողմից տրամադրված գրությունների, փաստաթղթերի պատճենները և «Խաչմիշշին» ՍՊԸ-ին չզրկել Գնումների գործընթացի հետագա մասնակցությունից և չընդգրկել Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող կազմակերպությունների ցանկում:

«Խաչմիշշին» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/123 ընթացակարգի շրջանակներում 25.07.2019թ. ժամը 10:05-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>Իջևանի համայնքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Իջևանի համայնքապետարանը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 10.07.2019թ. թիվ 551 գրությամբ հայտնել է, որ Պատվիրատուի և «Խաչմիշշին» ՍՊԸ-ի միջև 02.05.2019թ. կնքված «ՀՀ ՏՄԻՔ-ԳՀԱՇՁԲ-19/01» ծածկագրով ՀՀ Տավուշի մարզի Իջևան համայնքի Գանինի փողոցի զբոսայգու վերակառուցման աշխատանքների գնման պայմանագրի կատարման վերջնաժամկետը պայմանագր 1.3 կետով սահմանվել է 28.06.2019թ.:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունը, նաև հրաժարվել է աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանելու հնարավորությունից, Պատվիրատուն միակողմանի հրաժարվել է պայմանագրից համապատասխանաբար այն համարելով լուծված:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/123 ընթացակարգի շրջանակներում 25.07.2019թ. ժամը 10:05-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր պնդել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը, ինչպես նաև հայտնել, որ աշխատանքների իրականացման համար առաջացած խոչընդոտներն եղել են ընդամենը մի քանի օր, որից հետո Ընկերությունը հնարավորություն ուներ շարունակելու աշխատանքները:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/123 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/123 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Իջևանի համայնքապետարանի և «Խաչմիշշին» ՍՊԸ-ի միջև 02.05.2019թ. կնքվել է վերակառուցման աշխատանքների կատարման «ՀՀ ՏՄԻՔ-ԳՀԱՇՁԲ-19/01» ծածկագրով պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել նույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ Տավուշի մարզի Իջևան համայնքի Գանինի փողոցի զբոսայգու վերակառուցման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվել է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

2. «Խաչմիշշին» ՍՊԸ-ին ուղղված 04.07.2019թ. թիվ 539 գրությամբ Իջևանի համայնքապետարանը հայտնել է, որ Պատվիրատուն միակողմանի լուծում է Պայմանագիրը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 17.07.2019թ. թիվ 26/26-1/11976-2019 գրությունը, Իջևանի համայնքապետարանի 10.07.2019թ. թիվ 551 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Իջևանի համայնքապետարանի և «Խաչմիշշին» ՍՊԸ-ի միջև 02.05.2019թ. կնքվել է վերակառուցման աշխատանքների կատարման «ՀՀ ՏՄԻՔ-ԳՀԱՇՁԲ-19/01» ծածկագրով պայմանագիր, որի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել նույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ Տավուշի մարզի Իջևան համայնքի Գանինի փողոցի զբոսայգու վերակառուցման աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվել է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Պայմանագրի 1-ին կետի 1.3-րդ ենթակետով սահմանվել է, որ աշխատանքները սկսվում են Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է 28.06.2019թ.:

Պատվիրատուին ուղղված 08.05.2019թ., 13.05.2019թ., 05.06.2019թ., 13.06.2019թ., 18.06.2019թ., 25.06.2019թ. և այլ համապատասխան գրություններով դիմել է Իջևանի համայնքապետարանին, հայտնելով, որ Ընկերությունը հնարավորություն չունի իրականացնելու Պայմանագրով նախատեսված աշխատանքները, քանի որ մի խումբ անհայտ անձինք շինհրապարակում խոչընդոտում են աշխատանքների իրականացմանը, քանդում, պոկում են շարած սալիկները, կտրում լարերը և պատռում փոշուց պաշտպանվելու համար նախատեսված պաստառները:

Ընկերությունը հայտնել է նաև, որ 03.05.2019թ. շինարարական աշխատանքները սկսելուց հետո Ընկերությանը դիմել է նաև ոստիկանությանը պահանջելով դադարեցնել աշխատանքները:

Ընկերությունը 06.05.2019թ. կրկին վերսկսել է աշխատանքների իրականացումը, սակայն ոստիկանության աշխատակիցները կրկին ստիպել են դադարեցնել աշխատանքները:

Ընկերությունը վերոհիշյալ գրություններով Պատվիրատուին խնդրել է հարցին տալ լուծում, քանի որ ստեղծված խոչընդոտների պայմաններում Ընկերությունը չի կարողանում շարունակել աշխատանքները:

Պատվիրատուն 10.05.2019թ. թիվ 365 գրությամբ դիմել է ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության Իջևանի բաժնին՝ խնդրելով միջամտությունը շինարարական աշխատանքների բնականոն ընթացքն ապահովելու համար, քանի որ աշխատանքների իրականացման համար 02.05.2019թ. տրամադրված թիվ 5 շինարարության թույլտվության հիման վրա «Խաչմի22ին» ՍՊԸ-ի կողմից կատարվող շինարարական աշխատանքներին տարբեր միջոցներով խոչընդոտում է քաղաքացի Վ. Մելիքբեկյանը:

Իր հերթին Պատվիրատուն մի շարք գրություններով (10.05.2019թ., 29.05.2019թ., 20.06.2019թ.) Ընկերությանը հայտնել է, որ Իջևան քաղաքի Գանինի փողոցում իրականացվող շինարարական աշխատանքներն իրականացվում են տեղական ինքնակառավարման մարմնի իրավաչափ վարչական ակտի՝ շինարարության թույտվության և օրենքով սահմանված կարգով կնքված քաղաքացիաիրավական

պայմանագրի հիման վրա, ուստի վարչական ակտը համարվում է իրավաչափ, քանի դեռ օրենքով սահմանված կարգով այն անվավեր չի ճանաչվել: Դրա հետ մեկտեղ Պատվիրատուն դիմել է ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության Իջևանի բաժնի աջակցությունը, ուստի Ընկերությունը պետք է սահմանված կարգով վերսկսի և շարունակի շինարարական աշխատանքները, հակառակ դեպքում Ընկերությունը կկրի Պայմանագրով սահմանված պատասխանատվություն:

Ընկերությունը համապատասխան գրություններով բազմիցս դիմել է ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության Իջևանի բաժնին՝ խնդրելով հարցին տալ լուծում և թույլ տալ շարունակել Պայմանագրով նախատեսված աշխատանքների իրականացումը:

Ընկերությանն ուղղված 30.04.2019թ. ՀՀ քաղաքացի Վ. Մելիքբեկյանը հայտնել է, որ հողամասը, որտեղ Ընկերության կողմից իրականացվում են աշխատանքները, սեփականության իրավունքով պատկանում է իրեն և առանց իր համաձայնության տվյալ տարածքում որևէ գործողության դեպքում քաղաքացին համապատասխան մարմնին կներկայացնի հաղորդում իր սեփականության իրավունքի անձեռնմխելիությունը խախտելու համար:

Ընկերությանն ուղղված ՀՀ ոստիկանության Տավուշի մարզային վարչության Իջևանի բաժնի 17.05.2019թ. թիվ 86/7-2608 գրության համաձայն՝ իրականացվող շինարարական աշխատանքների վերաբերյալ քաղաքացի Վ. Մելիքբեկյանի հաղորդման հիման վրա հարուցվել է քրեական գործ:

«Խաչմիշշին» ՍՊԸ-ին և Իջևանի համայնքապետարանին ուղղված 24.05.2019թ. թիվ 55/577/1178-19 գրությամբ ՀՀ Քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչությունը հայտնել է, որ 38157719 քրեական գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման նպատակով անհրաժեշտ է անհապաղ դադարեցնել 02.05.2019թ. տրված շինարարական թույլտվության հիման վրա Իջևան քաղաքի Գանինի փողոցում գտնվող զբոսայգու վերակառուցման շինարարական աշխատանքները՝ մինչև քրեական գործով դրանց օրինաչափության հարցի լուծումը:

Նույն գրությամբ ՀՀ ոստիկանության Իջևանի բաժնին հանձնարարվել է անհրաժեշտության դեպքում աջակցել աշխատանքների դադարեցմանը՝ ապահովելով հասարարական կարգի պահպանումը:

02.07.2019թ. թիվ 55/577քր/1495-19 գրությամբ ՀՀ Քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչությունը հայտնել է, որ քրեական գործով նախաքննությունը շարունակվում է և դեռևս հստակեցված չէ, որ շինարարական աշխատանքները կատարվում են համայնքային սեփականություն համարվող տարածքում, ուստի նպատակահարմար է չշարունակել շինարարական աշխատանքների կատարումը՝ մինչև քրեական գործով դրա վերաբերյալ համապատասխան որոշում կայացնելը:

Պատվիրատուին ուղղված 01.07.2019թ. թիվ 19/41 գրությամբ «Խաչմիշշին» ՍՊԸ-ն հայտնել է, որ Պատվիրատուի համար հայտնի պատճառներով Ընկերությունը չի կարողանում իրականացնել Պայմանագրով նախատեսված աշխատանքները:

Նույն գրությամբ Ընկերությունը խնդրել է երկարաձգել Պայմանագիրը կամ լուծել այն, որպեսզի Ընկերությունը որևէ տույժի չենթարկվի, ինչպես նաև չներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

«Խաչմիշշին» ՍՊԸ-ին ուղղված 04.07.2019թ. թիվ 539 գրությամբ Իջևանի համայնքապետարանը հայտնել է, որ քանի որ Ընկերությունը խախտել է Պայմանագրով սահմանված պարտավորությունները, ուստի Պատվիրատուն միակողմանի լուծում է Պայմանագիրը:

Այսպիսով՝ Պայմանագրի 3-րդ կետի 3.1.4 ենթակետի համաձայն՝ միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

Պայմանագրի 3.2 կետի 3.2.1 և 3.2.3 ենթակետերով սահմանվել է, որ Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 717-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կապալառուն իրավունք ունի աշխատանքը չսկսել, իսկ սկսած աշխատանքը դադարեցնել այն դեպքերում, երբ պատվիրատուի կողմից կապալի պայմանագրով իր պարտավորությունները խախտելը, մասնավորապես, նյութեր, սարքավորումներ, նախագծային փաստաթղթեր կամ մշակման (վերամշակման) ենթակա գույք չտրամադրելը, խոչընդոտում է պայմանագրի կատարմանը, ինչպես նաև այնպիսի հանգամանքների առկայության դեպքում, որոնք ակնհայտ վկայում են, որ նշված պարտավորությունները չեն կարող կատարվել սահմանված ժամկետում (հոդված 367):

Այսպիսով՝ ուսումնասիրելով գործում առկա նյութերը, արձանագրում եմ, որ «Խաչմիշշին» ՍՊԸ-ն թույլ չի տվել Պայմանագրով սահմանված պարտավորության խախտում, քանի որ Ընկերության կողմից Պայմանագրով նախատեսված աշխատանքները սահմանված ժամկետում չկատարելը հետևանք է եղել Ընկերության կամքից անկախ հանգամանքներից ծագած պատճառների, որոնց վերաբերյալ «Խաչմիշշին» ՍՊԸ-ն բազմիցս դիմել է Պատվիրատուին՝ խնդրելով միջոցներ ձեռնարկել աշխատանքները շարունակելու նպատակով պայմաններ ստեղծելու համար: Այսպիսով՝ Ընկերության կողմից Պայմանագրով նախատեսված շինարարական աշխատանքները չկատարելը պայմանավորված է եղել Պատվիրատուի կողմից աշխատանքների կատարման համար անհրաժեշտ պայմանների ստեղծման հանդիպական պարտավորությունների չկատարմամբ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ Ընկերությունը թույլ չի տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 17.07.2019թ. թիվ 26/26-1/11976-2019 գրությամբ «Խաչմիշշին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**